ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակի գործունեության ֆինանսավորումն ապահովելու մասին

ք. Երևան «17» հունվար 2014 թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ)՝ ի դեմս գործերի կառավարիչ Հայրապետ Սիմոնյանի, մի կողմից և ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակը (այսուհետ՝ գրասենյակ)՝ ի դեմս տնօրեն Ավետիս Ավագյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը և «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագիրը, ինչպես նաև հիմնվելով Երևանի քաղաքապետի 2014 թվականի հունվարի 10-ի «Ծիծեռնակաբերդի խճուղի հ.10 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Լևոն Տեր-Պետրոսյանին պատկանող բնակելի տան կիսանկուղային և 1-ին հարկերի տարածքների գործառական նշանակությունը հասարակական սահմանելու մասին» որոշման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ կառավարության աշխատակազմը պարտավորվում է վճարել Երևան քաղաքի, Ծիծեռնակաբերդի խճուղի 10 հասցեում գտնվող տան կոմունալ ծախսերի (գազ, ջուր, էլեկտրաէներգիա, կապ, աղբահանություն,) յոթանասուն հինգ տոկոսը, համաձայն գրասենյակի կողմից ներկայացվող մատակարարներից ստացված հաշիվ-ապրանքագրերի:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Գրասենյակը պարտավորվում է ամեն ամսվա հինգերորդ օրը ներկայացնել նախորդ ամսվա կոմունալ ծախսերի մատակարարներից ստացված հաշիվ-ապրանքագրերը:

2.2. Կառավարության աշխատակազմը պարտավորվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում ապահովել սույն պայմանագրի 1.1. կետում նախատեսված ծախսերի վճարումը, ընդ որում, վճարումն իրականացվելու է ոչ կանխիկ ձևով՝ համապատասխան փաստաթղթերի առկայության հիման վրա:

3.Այլ պայմաններ

3.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.2.Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.3. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր, մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը պետք է ստորագրեն կողմերը:

4. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ կառավարության աշխատակազմ	Գրասենյակ
«ՀՀ կառավարության աշխատակազմ» Պետական կառավարչական հիմնարկ	ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակ
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ Կառավարական N1 շենք	Հասցե՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 10
Գործերի Կառավարիչ՝ Հայրապետ Սիմոնյանի	Գրասենյակի Տնօրեն՝ Ավետիս Ավագյանի
Կ. Տ. Ստորագրություն	Կ. Տ. Ստորագրություն